ционалист — это, конечно, совершенно ненужная натяжка, никак не соответствующая исторической действительности.

К недостаткам книги М. Мурадяна следует отнести нередко встречающиеся повторения, а также чрезмерно разбухшую, на наш взгляд, первую главу, в которой автор обращается к анализу имеющейся литературы о Х. Кара-Мурзе (как указывалось выше, литературе очень скудной). Желание автора показать отношение различных общественных кругов к деятельности Х. Кара-Мурзы—понятно, но это можно было сделать в гораздо более лаконичной форме, а не воскрешать и тем более полемизировать с давно уже и справедливо забытыми мнениями случайных рецензентов, писавших о Кара-Мурзе, мнениями, подчас вздорными и нелепыми. В то же время в работе М. Мурадяна не показано отношение выдающихся армянских композиторов к деятельности Х. Кара-Мурзы. А у некоторых из них (например, Ром. Меликяна) есть очень интересные высказывания о Х. Кара-Мурзе[1].

Сделанные нами критические замечания (некоторые из них имеют, быть может спорный характер) не могут повлиять на общую положительную оценку интересной работы М. Мурадяна о Х. Кара-Мурзе.

Г. ГЕОДАКЯН

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

Սովետական Հայաստանի գյուղական բնակավայրերի ուսումնասիրությանը այլևայլ առիթներով, սակայն թուցիկ կերպով, անդրադարձել են մեր ճարտարապետներն ու ազգագրագետները։ Գրախոսվող աշխատությունը[2] առաջին լուրջ փորձն է՝ հարուստ փաստական նյութի հիման վրա ընդհանրացնելու սովետական շրջանում Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետության մեջ կատարված փոփոխությունները և ուրվագծելու արդի բնակավայրերի ամբողջական պատկերը։

Աշխատությունը բաղկացած է չորս հիմնական գլխից, ունի նաև հակիրճ «Ներածություն» ու «Եզրափակում» և հագեցված է հարուստ իլյուստրատիվ նյութով (131 լուսանկար, հատակագիծ և այլն, որից 11-ը՝ գունավոր)։ Վերջում կցված են գրքում գործածված անձնանունների ու տեղանունների ցանկերը և նկարների ցուցակը՝ հայերեն և ռուսերեն։ Գրքի ծավալն է 244 էջ։

Հեղինակը, նախ, քննության է առնում գյուղական բնակավայրերի հատակագծման ու կառուցապատման հետ կապված հարցերը։ Այնուհետև, հանգամանալից վերլուծման են ենթարկվում այդ բնակավայրերի հիմնական բաղկացուցիչ մասերը՝ կոլտնտեսային արտադրական կառուցվածքները, բնակելի տան կոմպլեքսը և հասարակական կառուցվածքները։ Այսպիսով, իր ընդհանուր և մասնակի կողմերով, բնորոշ տարբերակներով, ընդգրկված և ուսումնասիրված է Սովետական Հայաստանի արդի գյուղական ճարտարապետությունը։

Սոցիալիստական շինարարության, հատկապես կոլտնտեսային կարգերի շնորհիվ, արմատական վերափոխման է ենթարկվել Հայաստանի գյուղացիության կյանքն ու կենցաղը։ Հենց այս ֆոնի վրա էլ հեղինակը դիտում է այդ նույն պայմանների շնորհիվ հայկական գյուղական բնակավայրերում կատարված փոփոխությունները։ Գյուղական բնակավայրերի ներքին կառուցվածքում կատարված հիմնական ու բնորոշ փոփոխությունն այն է, որ նոր սոցիալ-տնտեսական պայմանների շնորհիվ արտադրական կառուցվածքները առանձնացվել են բնակելի մասից, իսկ վերջինիս կենտրոնում առաջացել են հասարակական-կուլտուրական կառուցվածքները։

---

[1] См. письма Ром. Меликяна к П. М. Кара-Мурзе, Музей литературы и искусств АН АрмССР, архив Ром. Меликяна.

[2] Ս. Մնացականյան, *Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը, Երևան, 1956, էջ 244։*

Չնայած Հայաստանի գյուղական բնակավայրերի խիստ բազմազանությանը, հեղինակը դրանք հատակագծային առումով խմբավորում է երեք՝ ուղղանկյուն, շառավղաօղակային և խառը սխեմաներում, ըստ որում առաջինը և երկրորդը կիրառելի են բացառապես հարթավայրային հանգիստ տեղանքի պայմաններում, մեկը՝ բոլորովին հարթ տարածության բնակավայր հատակագծելիս, մյուսը՝ երբ հատակագծումը կատարելիս պետք է հաշվի առնվեն նաև տեղանքի խորտուբորդությունները: Երրորդը կիրառելի է առանձնապես լեռնային բարդ տեղանքի պայմաններում, ուր զուգակցվում են առաջինի և երկրորդի տարրերը, դրանով հնարավոր դարձնելով բարդ տեղանքի նպաստավոր կողմերի հատակագծային օգտագործումը կառուցապատման համար:

Հանգամանորեն և կոնկրետ օրինակներով լուսաբանելով այս հարցերը, հեղինակը, սակայն, ճիշտ մեկնակետ չի ընտրել, ուստի և նրա եզրահանգումները զգալիորեն կորցնում են իրենց արժեքը: Փոխանակ գոյություն ունեցող գյուղական բնակավայրերի բնորոշ օրինակների ուսումնասիրությամբ փորձելու տալ դրանց հատակագծային յուրահատկությունները, հեղինակը քննության առարկա է դարձնում մի շարք գյուղերի ու ավանների (Գյոդակլու, Ֆանտան, Սուրենավան, Մաստարա, Արաքս, Արմաշ, Կարմրաշեն, Վ. Արտաշատ, Խաթունարխ, Սամադար, Արտենի, Փարաքար, Ֆրանդանոց, Շահնազար և այլն) ճարտարապետական հատակագծերը, մեծ մասամբ կազմված 1935—37 թթ. և կյանքում կամ զրեթե կիրառություն չստացած կամ էլ հետագայում անճանաչելիորեն վերափոխված: Այդ հատակագծերը, ինչպես գիտում է նաև հեղինակը, աչքի են ընկնում «երկրաչափական կանխակալ ձևերի ոչ տրամաբանական օգտագործումով, երբ տեղի ռելյեֆին լիովին չհամապատասխանող փողոցների ցանցը արհեստականորեն դրվում էր գյուղի հատակագծման կոմպոզիցիայի հիմքում և ամեն ինչ ենթարկվում գծագրի սիմետրիկ ձևերին» (էջ 65): Եթե նկատի առնվի նաև, որ գյուղերի, հատկապես լեռնային գյուղերի կառուցապատումը գնացել և գնում է բնական ճանապարհով, առանց ճարտարապետական նախագծումների շոշափելի միջամտության, ապա հասկանալի կդառնա, թե ինչու այդ հատակագծերի քննությունը զբաղում թողնում է ավելի վերացական դատողությունների, քան իրական բնակավայրերի ճարտարապետության ուսումնասիրության տպավորություն:

Ըստ էության նույն սկզբունքով է շարադրված գրքի նաև հաջորդ գլուխը, որը վերնագրված է «Կոլտնտեսային արտադրական կառույցվածքները»: Այստեղ հեղինակը ընդհանուր կարգի դատողություններ է անում այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն կոլտնտեսային անասնագոմերը, պահեստները, արհեստանոցները, գյուղական հիդրոկայաններն ու ջրհան կայանները, շատ քիչ բան ասելով այն մասին, թե ինչպիսին են արդեն կառուցվածները, որոնք մի քանի տասնամյակ օգտագործվել են և հենց դրանց քննության հիման վրա է, որ կարելի է կոնկրետ և օգտակար եզրակացությունների հանգել:

Անհամեմատ հաջողված է հաջորդ՝ գյուղական բնակավայրերի բնակելի տան ուսումնասիրությանը նվիրված գլուխը: Այստեղ հեղինակը խորացել է բուն գյուղական տան կոմպլեքսի կոնկրետ վերլուծման մեջ:

Նախ, համառոտ ակնարկով ներկայացված է հայկական հին գյուղական տունն իր օժանդակ կառուցումներով ու տնտեսական բակով և տրված է դրա ճիշտ բնորոշումը՝ բնակելի և կիսաարտադրական ֆունկցիաներով, ապա նշված է, որ «ժողովրդական ճարտարապետության զարգացումը կոլտնտեսային կարգերի հաղթանակից հետո ընթանում է բնակելի տան կիսաարտադրական գործոնի վերացման և կլիմայական պայմաններից նրա ունեցած կախվածության էական թուլացման ճանապարհով» (էջ 132):

Ելնելով Հայաստանի աշխարհագրական և բնա-կլիմայական պայմանների խիստ բազմազանությունից, որոնցով էլ հիմնականում պայմանավորվում են գյուղացիների տնտեսական զբաղմունքների, կենցաղի, ինչպես նաև բնակարանի յուրահատկությունները, հեղինակը ասանձին-առանձին քննում է լեռնային, հարթավայրային-ցածրադիր և նախալեռնային շրջանների արդի գյուղական տների կոմպլեքսները և հատկապես սովետական շրջանում դրանց մեջ կատարված փոփոխությունների բնույթը[1]:

Հայկական լեռնային գյուղական բնակարանի հիմնական տիպը հայոնի գլխատունն է իր բազմաթիվ տարբերակներով: Հեղինակը հանգամանորեն կանգ է առնում գլխատան

[1] Ի դեպ, նշենք, որ առհասարակ անտեսված է սարային բնակավայրը, որը ունենալով իր խիստ յուրահատուկ կողմերը, նույնպես մտնում է ժողովրդական ճարտարապետության մեջ և անպայման ուշադրության արժանի է:

յուրահատկությունների, կառուցվածքային և ֆունկցիոնալ հատկանիշների և մյուս հարակից հարցերի վրա։ Ճիշտ կերպով սահմանագծելով դրա տարածման շրջանները Սովետական Հայաստանում՝ Գեղարքունիք, Շիրակ, Վայոց Ձոր, Լոռի և Զանգեզուր, անդրադարձել է նաև դրանց յուրահատկություններին։ Հաջող են ներկայացված հատկապես Գեղարքունիքի (Նոր Բայազետի, Մարտունու, Բասարգեչարի շրջաններ) գլխատան ներքին կառուցվածքում սովետական շրջանում կատարված փոփոխությունները։ Այստեղ դիպուկ են տրված հատկապես նոր քաղաքատիպ սենյակների առաջացման և դրանք տեղական պայմաններին հարմարեցնելու ժողովրդական ինքնագործ ճարտարապետության նվաճումները, դրա հետ կապված՝ գլխատան հին կոմպլեքսի մեջ կատարված ֆունկցիոնալ փոփոխությունները (գոմի օդայի վերացումը, գլխատան վերածումը խոհանոց-սեղանատան, անասունների համար ետնամուտք բացելը և նրանց ելումտի առանձնացումը և այլն)։

Հիմնական գծերով հարազատորեն է ներկայացված նաև լեռնային գյուղական արդի բնակարանի Լոռու տարբերակը՝ որպես յուրահատուկ և ամբողջական տիպ։ Լեռնային բնակարանի նույնքան յուրահատուկ և ամբողջական տիպ է Զանգեզուրի ժայռափոր տունը, որում, ինչպես և առհասարակ Զանգեզուրի բնակավայրում կատարված փոփոխություններին հեղինակը, ցավոք սրտի, խիստ փութանցիկ է անդրադառնում։

Հարթավայրային-ցածրադիր շրջանների (որոնց տակ հեղինակը նկատի ունի բացառապես Արարատյան դաշտավայրը) հարթ կտուրով բնակելի տան հակիրճ՝ քննությամբ, հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս դրա արմատական տարբերությունները լեռնային շրջանների կիսագմբեթաձև կտուրով բնակելի տնից։ Այդ տարբերությունները արտահայտվում են շինանյութերի, ներքին բաժանմունքների, տեղական պայմաններին հարմարվածության, կոմպոզիցիոն ու կառուցապատման ձևերի և մի շարք այլ հանգամանքների մեջ, որոնք բխում են բնա-կլիմայական պայմանների, տնտեսական գրաղմունքների և կուլտուրայի ու կենցաղի տարբերություններից։ Այսպես, եթե լեռնային շրջաններում բնակարանը իր կառուցվածքով ամբողջությամբ հարմարեցված է հատկապես անասնապահական ու դաշտավարական գրաղմունքներին և բնակության համար անհրաժեշտ ջերմության ապահովմանը, ապա Արարատյան դաշտավայրում այն հարմարեցված է խաղողագործական ու այգեգործական գրաղմունքներին և բնակության համար անհրաժեշտ զովության ապահովմանը։ Հենց այս հանգամանքներն էլ թելադրում են յուրաքանչյուր վայրի բնակարանի կառուցողական ձևերն ու կոմպոզիցիոն տարբերը։

Առավել հակիրճ կերպով են ներկայացված նախալեռնային շրջանների (սրանց տակ հեղինակը առնում է Կոտայքի, Ախտայի շրջանները և Աշտարակի շրջանի մի քանի գյուղեր) բնակելի տները, դրանք բնորոշելով որպես միջին տիպ լեռնայինի և հարթավայրային-ցածրադիրի նկատմամբ։

Գլխի վերջում քննության առարկա են դարձվում մեկ և երկհարկանի՝ մեկ, երկու և երեք սենյականոց բնակարանների ինչպես անհատական, նույնպես և տիպային ճարտարապետական նախագծերի մի քանի նմուշներ, որոնց մի մասը վերջին տարիներս մասնակի կիրառություն են միայն գտացել, իսկ մեծ մասն էլ դեռևս գործնական փորձարկման չեն ենթարկվել։ Դրանցից գրեթե ոչ մեկն էլ, ինչպես հավաստում է հեղինակը, զերծ չէ թերություններից, ուստի և չի կարելի երաշխավորել որպես լիարժեք նախագիծ։

Ինչպես նշվել է արդեն, այս գլուխը թերևս կարելի է համարել գրքի ամենահաջողված բաժինը։ Այսուհանդերձ, մի կարևոր պարապ վրիպել է հեղինակի ուշադրությունից։ Հայտնի է, որ Սովետական Հայաստանի արդի հայ ազգաբնակչության գգալի մասը հիմնականում կազմավորվել է 1830-ական թվականներին Արևմտյան Հայաստանից ներգաղթած հայերից։ Այդպես է գրությունը, օրինակ՝ ամբողջ Արարատյան դաշտավայրում, Գեղարքունիքում, Արագածոտնում և այլ վայրերում։ Հեղինակը պետք է աշխատեր գեթ ընդհանուր գծերով ցույց տալ, թե բնակարանային մշակույթի ինչպիսի ժառանգություն են բերել դրանցից յուրաքանչյուրը, նոր պայմաններում ինչ փոփոխությունների է ենթարկվել այն, որից հետո ավելի հիմնավորված ու հասկանալի կդառնար սովետական շրջանում այդ մշակույթի մեջ կատարված փոփոխությունների և այդ փոփոխությունների մեջ ժողովրդի բաղմադարյան փորձի օգտագործման էությունն ու բնույթը։

Գրքի ամենաընդարձակ բաժինը վերջին գլուխն է՝ նվիրված գյուղական բնակավայրերի հասարակական կառուցվածքների ուսումնասիրությանը։ Ասենք կանխավ, որ այս գլուխը ևս հիմնականում հաջողված է։ Հասարակական կառուցվածքների, որպես արդի գյուղական բնակավայրի կենտրոնի ճարտարապետական անսամբլի, առաջացումն իրավա-

ցիորեն գիտելով որպես հայկական գյուղի սոցիալիստական վերափոխման արդյունք, հեղինակը հանգամանորեն վերլուծում է թե՛ այդ անսամբլը որպես մի ամբողջություն և թե՛ դրա բաղկացուցիչ կառուցվածքները։ Որպես կոլտնտեսային գյուղի հասարակական կենտրոնի առավել նշանակալից կառուցվածքներ, մանրաղնին վերլուծման են ենթարկվում ակումբների շենքերը, քանի որ, ինչպես նշում է հեղինակը, «նրանց ճարտարապետական կերպն է, որ հիմնականում որոշում է ամբողջ հասարակական կենտրոնի անսամբլի բնույթը» (էջ 151)։ Հեղինակը, ելնելով դահլիճների տարողությունից, որով էլ հիմնականում պայմանավորվում են հարակից բաժանմունքները թե՛ ճարտարապետական և թե՛ ծավալային ու ֆունկցիոնալ առումներով, ակումբները երեք կարգի է բաժանում՝ 100, 200 և 300—400 տեղանոց դահլիճներով ակումբների։ Այստեղ արդեն միանգամայն հիշտ վարվելով, հեղինակը ճարտարապետական գծագիրը արհեստականորեն չի դատել կառուցվածքից, ինչպես այդ արել է նախորդ գլուխներում, այլ դրանք քննության է առել միաձույլ, համատեղ, որով նրան հաջողվել է համատեղ կերպով ցույց տալ նախագծերի թե՛ առավելությունները և թե՛ թերությունները, միաժամանակ ընդհանրացնելով սովետահայ ճարտարապետության նվաճումները ակումբաշինարարության բնագավառում։

Այնուհետև քննարկված են գյուղական կենտրոնի մյուս կառուցվածքների՝ դրադարան-ընթերցարանների, կոլտնտեսության վարչությունների ու գյուղական սովետների, զպրոցների, մանկապարտեզների, մանկամսուրների, հյուրանոցների, խանութների, հիվանդանոցների շենքերի ճարտարապետության հետ կապված հիմնական հարցերը։

Գլխի վերջում ջերմ շնչով է կատարված ազրյուր-հուշարձանների ուսումնասիրությունը։ Դրանք լինելով կիրառական արվեստի կոթողներ, ինչպես նշում է հեղինակը, «յուրահատուկ են հատկապես Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղի ճարտարապետությանը» (էջ 208) և կոչված են «ազրյուրի ջրի միշտ կարկաչուն հոսանքով հավերժացնելու Հայրենական պատերազմում զոհված մարտիկների հիշատակը» (209—210)։

Այսպիսով, ճարտարապետ Ս. Մնացականյանը ընտրել է բոլորովին խոպան թեմա և, չնայած նման դեպքերում անխուսափելի որոշ թերություններին, հիմնականում կարողացել է մշակել այն, հրապարակ հանելով մտքեր շարժող, դրանով իսկ ուշադրության հույժ արժանի աշխատություն, այդ աշխատությամբ հիմք դնելով Հայաստանի արդի գյուղական բնակավայրերի ճարտարապետության ուսումնասիրման կարևոր գործին։

Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ